

Փոքրիկը փողոցում

Խորհուրդներ ծնողներին

1. Շքամուտքից դուրս գալիս

Եթե տան շքամուտքի մոտ հևարավոր է ավտոմեքենաների երթևեկություն, անմիջապես երեխայի ուշադրությունը դրա վրա հրավիրեք և միասին նայեք, արդյո՞ք մեքենա չկա:



Եթե շքամուտքի մոտ ավտոմեքենա կա կանգնած կամ ծառ է աճում, որը ծածկում է տեսադաշտը, մի պահ կանգ առեք և դիտեք, թե արդյո՞ք դրանց հետևում շարժվող ավտոմեքենա չի երևում:

2. Տեղաշարժը մայթերով

Պարբերաբար երեխայի ուշադրությունը հրավիրեք հեռվում երևացող և երթևեկող ավտոմեքենաների վրա, հատկապես նրանց, որոնք շատ արագ են շարժվում:

Կանգ առեք կանգնած բեռնատարի կամ մարդատար ավտոմեքենայի մոտ և երեխային ցույց տվեք, որ կանգնած ավտոմեքենաները ծածկում են տեսադաշտը դեպի փողոց: (Նման դեպքում միգուցե թվա, թե վտանգ չկա, իսկ այդ ժամանակ սլացող մեկ այլ ավտոմեքենա հանկարծ կհայտնվի): Հատկապես օգտակար է երեխային ցույց տալ կանգնած ավտոմեքենայի հետևից հայտնվող սլացող ավտոմեքենան: Կայանած ավտոմեքենայի դիմացի հատվածից չի երևա նույն ուղղությամբ շարժվող ավտոմեքենան, իսկ հետևի հատվածից չի երևա հանդիպակաց կողմից եկող ավտոմեքենան: Չբոսանքների ժամանակ շատ օգտակար են նմանատիպ դիտարկումները

կատարել փողոցը ծածկող տարբեր առարկաների մոտից (օրինակ թփեր, ծառեր, ցանկապատեր և այլն): Նման դիտարկումների արդյունքում երեխաների մոտ փողոցում անվտանգությունը պահպանելու նս ուղղված մի կարևոր ռեֆլեքս՝ թաքնված վտանգի կանխատեսում:



3. Ինչպես անցնել փողոցը (երբ լուսակիր չկա)

Խաչմերուկների վրա երեխաներին սովորեցրեք ուշադրություն դարձնել այն ավտոմեքենաներին, որոնք պատրաստվում են թեքվել աջ կամ ձախ: Որպես կանոն, աջ թեքվող մեքենան զբաղեցնում է աջ եզրային գոտին և նրա վրա միացված է լինում թարթիչը: Չի կարելի կանգնել թեքվող ավտոմեքենային շատ մոտ. այն կարող է «բռնել» անցորդին, խփել կամ էլ հետևի անիվներով անցնել նրա վրայով:

Դիտարկելով մոտեցող խոշոր ավտոմեքենաները (ավտոբուս, բեռնատար), երեխայի ուշադրությունը հրավիրեք այն բանի վրա, որ այդ ավտոմեքենայի հետևում կարող է «թաքնված լինել» մեկ այլ ավտոմեքենա, որը, հնարավոր է, որ ավելի արագ է ընթանում: Այդ պատճառով, ցանկալի է սպասել, որ մեծ մեքենան անցնի, նոր շարունակել ճանապարհը:

Քննադատեք այն անցորդներին, ովքեր չեն սպասում լուսացույցի իրենց հերթին և կանաչ լույսի տակ հատում են ճանապարհը:

Եթե հանդիպակաց մայթի կանգառում կանգնած է (կամ մոտենում է) ձեզ անհրաժեշտ տրանսպորտային միջոցը, վազելով մի՛ հատեք փողոցը: Ավելի լավ է բաց թողնել այն և սպասել հաջորդին:



Բացատրեք երեխային, թե ինչքան վտանգավոր է վազել-հատելով փողոցը շտապել ավտոբուսի մոտ և միմիայն նրա վրա նայել (այդ դեպքում շատ հեշտությամբ կարող եք չնկատել փողոցով ընթացող ավտոմեքենան): Բացատրեք, որ փողոցը պետք է անցնել միայն հետիոտների համար նախատեսված անցումներով:

4. Շեղող իրավիճակներ

Նման իրավիճակներ կարող են ստեղծվել, երբ փողոցի մյուս մայթում հայտնվում է որևէ մեկը կամ ինչ-որ բան, որը շեղում է երեխայի ուշադրությունը՝ տուներ, ընկերները, տատիկը, հայրը, մայրը, քույրը, անհրաժեշտ ավտոբուսը:

Անհրաժեշտ է նման իրավիճակները օգտագործել՝ երեխային հիշեցնելու համար այն վտանգի մասին, որը կարող է առաջանալ նման իրավիճակում, երբ այդ պահին չեն նկատում մոտեցող ավտոմեքենան: Պետք է բացատրել, որ անհրաժեշտ է շատ ուշադիր նայել փողոցը:

5. Ավտոբուս նստելիս

Բացատրեք երեխային, որ երբ մոտենում է ավտոբուսը, անհրաժեշտ է կանգնել մայթի եզրից որոշակի հեռավորության վրան (ավտոբուսը կարող է հարվածել): Ավտոբուսի դռանը պետք է մոտենալ, երբ տրանսպորտն արդեն կանգնել է:



6. Երևթեկությունը ավտոբուսում

Երեխային սովորեցրեք անհրաժեշտության դեպքում բռնվել բազրիքից և դրանով խուսափել անկանխատեսելի իրավիճակներից՝ կտրուկ արգելակման դեպքում հավասարակշռությունը կորցնելուց և մոտակա իրին հարվածելուց:

Բացատրեք երեխային, որ ավտոբուսից իջնելուն պետք է նախապես պատրաստվել: